Հաշվետվություն

2018 թվականի հոկտեմբերի 7-ից 10-ը Չեխիայի Հանրապետություն (Պրահա) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Սարհատ Պետրոսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի ղեկավար

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Չեխիայի Հանրապետություն, Պրահա, 2018 թ. հոկտեմբերի 7-ից 10-ը

4. **Հրավիրող կողմը.**
   «Եվրոգեոգրաֆիքս» կազմակերպություն

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն «Եվրոգեոգրաֆիքս» կազմակերպության գլխավոր համաժողովին

6. **Քննարկված թեմաները.**
   Քննարկվեցին գլխավոր համաժողովի օրակարգով նախատեսված հետևյալ հարցերը.
   - Կադաստրի, սեփականության իրավունքների գրանցման և ազգային քարտեզագրական գործունեության իրականացումը միասնական կառավարմամբ (Չեխիայի Հանրապետության փորձը),
   - Էլեկտրոնային կառավարումը և հավաստի տվյալների տրամադրումը,
   - Կադաստրի ոլորտում բլոքչեյն տեխնոլոգիաների կիրառման հնարավորություններն ու հեռանկարները,
   - Երկրատարածական տեղեկատվության շրջանակի ներկայացում,
   - Տարածական տվյալների ենթակառուցվածքի կիրառումը՝ ուղղված էլեկտրոնային կառավարմանը, վստահության բարձրացմանը և փոխգործակցության զարգացմանը,
   - Եվրոպական տեղորոշման ծառայությունների հեռանկարները,
   - Կազմակերպության ռազմավարական մոտեցումները:

7. **Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր.**

Հանդիպումներ են տեղի ունեցել Եվրոգեոգրաֆիքս կազմակերպության նախագահի, գլխավոր քարտուղարի, կազմակերպության քաղաքականության մշակման պատասխանատուի հետ: Համաժողովի օրերին, ի թիվս այլոց, հետագա համագործակցության վերաբերյալ աշխատանքային քննարկումներ են կազմակերպվել Ճապոնիայի միջազգային զարգացման գործակալության (ՃՄԶԳ), Լեհաստանի գեոդեզիայի և քարտեզագրության գլխավոր գրասենյակի, Վրաստանի հանրային գրանցման ազգային գործակալության ներկայացուցիչների, Ֆրանսիայի աշխարհագրական տեղեկատվության ազգային ինստիտուտի գլխավոր տնօրենի հետ:
Համաժողովի շրջանակներում քննարկման առանցքային թեմաների շարքում էին հավաստի տվյալների տրամադրումը համաեվրոպական միասնական հարթակում և այդ տվյալների հավաստիության հաստատման մեխանիզմների մշակումը:
Քննարկվեցին նաև Եվրոպական տեղորոշման ծառայությունների հայեցակարգին ու հեռանկարներին առնչվող հարցեր: Նշված նախագծի նպատակը եվրոպական երկրատարածական տվյալների տրամադրման ծառայություններին պաշտոնական ազգային աղբյուրներից միասնական մուտքի ապահովումն է:
Այս հարցի վերաբերյալ չի ներկայացվել հայկական կողմի ամփոփիչ դիրքորոշումը՝ ներպետական մակարդակում համապատասխան քննարկումների և խորհրդակցությունների անհրաժեշտությամբ պայմանավորված:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**.

Համաժողովի վերջին օրը ընդունվել և հաստատվել են կազմակերպության 2019 թվականի գործառնական պլանը և բյուջեն: Ընտրվել են կառավարման խորհրդի նոր անդամներ: Քվեարկության միջոցով ընտրվել է նաև կազմակերպության նոր նախագահ՝ Քոլին Բրեյը: Հայաստանը՝ որպես կազմակերպության լիիրավ անդամ, մասնակցել է բոլոր քվեարկություններին:
Որոշում է կայացվել գլխավոր համաժողովի հաջորդ նիստն անցկացնել Մեծ Բրիտանիայի Մանչեսթեր քաղաքում:
Ձեռք բերված պայմանավորվածությունների արդյունքում առաջիկայում նախատեսվում է ՃՄԶԳ ներկայացուցչի այցը Հայաստան՝ ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կարիքներին համապատասխան նոր նախագծային առաջարկ ներկայացնելու նպատակով:
Հայաստանի համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում Ալբանիայի փորձը, ուստի դիտարկվում են նաև ալբանական կողմի հետ փորձի փոխանակման հնարավորությունները:
Առաջիկայում նախատեսվում է վրացական փորձին ծանոթանալու նպատակով այցելել Վրաստան, վերագործարկել տոպոգրաֆիկ տվյալների հենքի ստեղծման հայ-լեհական համատեղ նախագիծը:

Կազմակերպության մի շարք անդամներ, այդ թվում՝ Հայաստանը, Եվրոպական տեղորոշման ծառայությունների վերաբերյալ ունեին մի շարք վերապահումներ: Ուստի Հայաստանի պատվիրակության անդամները ժամանակ են խնդրել դրա մանրամասները Հայաստանի Հանրապետության կառավարության հետ համաձայնեցնելու համար: Մասնավորապես՝ դրանով նախատեսվում է բաց հարթակի միջոցով հասանելի դարձնել «Inspire» ծրագրով նախատեսված երկրատարածական տվյալները:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**
Առաջարկվեց շարունակել համագործակցությունը համատեղ ծրագրերի, առաջարկությունների շրջանակներում, մշակել ռազմավարական նոր ուղիներ, աշխատել հավաստի տվյալների տրամադրման, մասնավորապես «հավաստի տվյալներ» հասկացության հստակեցման և շահագրգիռ կողմերի միջև առավել արդյունավետ հաղորդակցության ապահովման ուղղությամբ:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

Սարհատ Պետրոսյան 15.10.2018թ.